



# Ը Հ Մ Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ, ՏԵՂԱԿԱՆ  
ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄՊԱՍԱՐԿՄԱՆ  
ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՐՇԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՃՅՈՒՂԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

2016թ. թիվ 26

## ՊԵՏՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՐՇՄԻՈՒԹՅՈՒՆԸ՝ ՄԱՀՄԱՆԻՆ

Հայաստանի պետիմնարկների արհմիության երիտասարդական թևի նախաձեռնությունը՝ Բաղանիս համայնք այցելելու, ամեննին էլ չսահմանափակվեց միայն սահմանամերձ Բաղանիս այցելությամբ և սահմանապահ զինվորներին տեսակցությամբ:

Երիտթևի նախաձեռնությանը միացան ճյուղային հանրապետական արհմիության նախագահ Անահիտ Ասատրյանը, արհմիության գործընկեր «Ռիպա» առողջարանի տնօրեն Ռուզաննա Սարգսյանը, արհմիության ներկայացուցիչներ:

Ռ.Սարգսյանի բարի կամքով առողջարանի թեև օգտագործված, սակայն սահմանամերձ բնակավայրերին այդքան անհրաժեշտ 17 հեռուստացույցները երիտասարդական թևի մի քանի ներկայացուցիչները ճյուղային հանրապետական միության նախագահի ու արհմիության ներկայացուցիչների հետ հասցեատերերին հասցրին սիրով ու նվիրվածությամբ: Իրենց պաշտպանող զինվորների կողքին թեկուզ մի քանի ժամ լինելու ցանկությունը վաղուց էր նրանց ստիպել լարված ժամանակներում սահմանին գտնվելու և եռագույնը ի տես ադրբեջանցու ծածանելու: Նրանք խիզախեցին իրենց մայիսի 15-ը հենց ադրբեջանցու սահմանին կից Բաղանիս գյուղում անցկացնել և մայրաքաղաք վերադարձան մի փոքր հանգստացած խղճով՝ իրենց արարքով ամրապնդելով մայիսյան եռատունը:

Այսօր շուրջ 800 բնակիչ ունեցող Բաղանիսի պատմությունը ծայր է առնում հինգերորդ դարից: Դեռևս 1200-ական թվականներին թաթար-մոնղոլներից տուժած բնակավայրը վերականգնել են հենց բաղանիսցիք: Ադրբեջանի սահմանից գյուղի հեռավորությունը ընդամենը երկու կիլոմետր է, անգն աչքով էլ կարելի է նշմարել ադրբեջանական զինուժի հենակետերը: 2012-ից համայնքի ղեկն ստանձնած Նարեկ Սահակյանը որևէ ջանք չի խնայում համայնքում առկա խնդիրներին լուծում տալու համար: Օրվա խնդիրներին ավելացել է թշնամուն դիմակայելը: Համայնքում կամավորների վաշտ կա. կամավորները քնի ժամերն անցկացնում են դիրքերում՝ զենքը ձեռքին, զգոն են օրվա քսանչորս ժամը: Կամավորների հրամանատարը Նարեկ Սահակյանն է՝ Հայաստանում համայնքների ղեկավարների մեջ ամենաերիտասարդը, ով նաև արհմիության երիտասարդական թևի անդամ է: «Գյուղն ուժեղացված հսկողության տակ է, - հանրապետական արհմիության նախագահի և իր արհմիութենական ընկերների հետ կիսվում է Նարեկը, - այս օրերին էլ դպրոց-մանկապարտեզում պարապմունքը ոչ մի օր չի ընդհատվել:» Գյուղը գիշեր ու ցերեկ արթուն պահելը դարձել է կամավորների առօրյան: Մեկ տարին չբոլորած փոքրիկ Արամն էլ նույն ոգով է մեծանում՝ առավոտ կանուխ Նարեկ հայրիկին զինվորի հագուստով աշխատանքի ճամփելիս:

Նարեկի միջոցով արհմիութենականները ծանոթացան համայնքի խնդիրներին, տարվող աշխատանքներին ու աշխատողների աշխատանքային պայմաններին: Համայնքի դպրոցում 110 աշակերտ է սովորում, մանկապարտեզում դաստիարակվում են 18-ից ավել երեխա: Արհմիության ներկայացուցիչների մանկապարտեզ այցելությունն ասես տոն էր փոքրիկների համար. արհմիության երիտասարդները նրանց անհրաժեշտ գրենական պիտույքով ու քաղցրավենիքով դիմավորեցին: Հայրենասիրությունն այստեղ սկսվում է հենց մանկապարտեզից: Բաղանիսցին հարուստ է իրեն

պաշտպանող ազատամարտիկներով, հպարտ՝ հայրենի հողը սեփական կյանքից վեր դասող հերոսներով:

Արհմիության ներկայացուցիչները եղան նաև դիրքերում, քաղցրավենիք, սուրճ, թեյ ու ծխախոտ տարան սահմանը պահող զինվորներին, մի քանի ժամով զգացին սեփական հողը պահելու դժվարությունը, հուզվեցին ու գոտեպնդվեցին հայ զինվորի սխրանքներով:

Արհմիութենականների այցը սահմանամերձ բնակավայրեր ավարտվեց հայոց հնագույն Հաղարծնի վանքային համալիրում խաղաղության աղոթքներով:

**Հ.Գ.** Երանի արհմիության աննշան թվացող այս քայլին միանար յուրաքանչյուր աշխատող, յուրաքանչյուր գործատու, յուրաքանչյուր հայ մարդ, ով գիտակցում է, որ հայ զինվորը միայն մեր միասնությամբ է աներեր:

Արհմիության ուժն էլ է միասնության մեջ:

## **ՀԱՄԿ-Ի ԳՈՐԾԿՈՄՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՁԵՌՔ Է ՄԵԿՆԵԼ ԱՐՑԱԽԻ ԳՈՐԾՆԿԵՐՆԵՐԻՆ**

ՀԱՄԿ-ի գործկումի արտահերթ նիստի որոշմամբ Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան երեք մլն. դրամ օգնություն է տրամադրել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արհմիությունների ֆեդերացիային՝ ադրբեջանական վերջին ռազմական գործողությունների հետևանքները կրող արհմիության անդամներին մարդասիրական օգնություններ տրամադրելու նպատակով:

Ավելի վաղ Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան հայտարարություն տարածել էր, որում դատապարտում էր ադրբեջանական իշխանությունների՝ ռազմական գործողություններ սկսելու ագրեսիվ և հանցավոր որոշումը: Հայտարարությունում մասնավորապես ասվում է. *«Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան արձագանքելով ապրիլի 1-ի լույս 2-ի գիշերը դարաբաղա-ադրբեջանական շփման գծի ողջ երկայնքով, ինչպես նաև խաղաղ բնակչության ուղղությամբ Ադրբեջանի կողմից ծանր տեխնիկայի և օդուժի կիրառմամբ ձեռնարկված ակտիվ հարձակողական գործողությունների փաստին, իր մտահոգությունն է հայտնում ռազմական գործողությունների անկանխատեսելի հետևանքների կապակցությամբ:*

*ՀԱՄԿ-ը դատապարտում է ադրբեջանական իշխանությունների՝ ռազմական գործողություններ սկսելու ագրեսիվ և հանցավոր որոշումը, որն արդեն իսկ ԼՂՀ խաղաղ բնակչության և զինվորականների շրջանում հանգեցրել է բազմաթիվ զոհերի ու վիրավորների:*

*ՀԱՄԿ-ը խորապես ցավակցում է զոհված բնակիչների և զինծառայողների հարազատներին, իսկ վիրավորներին մաղթում շուտափույթ ապաքինում:*

*Մենք լիահույս ենք, որ ՄԱԿ-ը և միջազգային այլ կառույցները միջոցներ կձեռնարկեն կանխելու Ադրբեջանի կողմից տարածաշրջանում վերսկսած լայնածավալ պատերազմական գործողությունները»:*

Հայաստանի պետիմնարկների, ՏԻՄ-երի և հասարակական սպասարկման աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ Ա.Ասատրյանը ադրբեջանական ռազմական գործողությունների մասին տեղեկատվությունն իր հերթին տրամադրել է արհմիության միջազգային գործընկերներին:

Խաղաղ ու ապահով երկինք բոլորին:

## **ՆՊԱՍՏԵՆՔ ՊՐՈՖՏՈՒՐԻ ԿԱՅԱՑՄԱՆԸ**

*Հայաստանի պետիմնարկների արհմիության «Պրոֆտուր» զբոսաշրջային ընկերությունը շարունակում է կազմակերպել աշխատողների հանգիստը սոցիալաթերթի շրջանակներում՝ առաջարկելով հանգիստ Հայաստանի և Արցախի ավելի քան 50 ուղղություններով:*

*Սոցիալաթերթից դուրս ընկերության ծառայություններից օգտվող արհմիության անդամները ևս կապասարկվեն զեղչերով՝ ՃՀՄ նախագահության որոշմամբ սահմանված կարգով:*

*«Պրոֆտուրի» զարգացումը ամրապնդում է արհմիության ֆինանսական հենքը:*

**ՄԱՅԻՍՄԵԿՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ՝  
ՊԵՏՉԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՐՀՄԻՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅԱՄԲ**

Հայաստանի պետական հիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակական սպասարկման աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական արհմիությունը մայիսի 1-ին անցկացրեց աշխատանքի օրը խորհրդանշող ավանդական խաղաղ երթ: Մինչ երթը մասնակիցները մեկ րոպե լռությամբ հարգեցին արցախյան քառօրյա պատերազմում զոհված հայորդիների հիշատակը: Հանրապետության հրապարակից մինչև Շառլ Ազնավուրի հրապարակ երթուղին մասնակիցներն անցան Ո՛Չ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ, ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ, ԴՈՒՔ ՎՃԱՐՈՒ՞Մ ԵՔ ՀԱՐԿԵՐԸ, ԱՇԽԱՏԱՆՔ ԲՈՒՆՈՒՄ, ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂԸ ԱՌԱՋՆԱԳԾՈՒՄ, ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՇԽԱՏՈՂԻ ՀԵՏ, ԵՂԻՐ ՊԱՇՏՊԱՆՎԱԾ և այլ կարգախոսներով: Իսկ մասնակիցները Մասիսի, Գավառի, Սևանի, Իջևանի, Հրազդանի, Արագածի, Թալինի, Արարատի, Աշտարակի տարածքների, ինչպես նաև ՀՀ կառավարության աշխատակազմի «Սպասարկում» ՊՈԱԿ-ի, «ՀՀ զբաղվածության պետական ծառայություն» գործակալության, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության, ԱՎԾ Կոտայքի մարզային գործակալության, Հայաստանի պատմության թանգարանի, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունների, ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության, Մալաթիա-Սեբաստիա, Արաբկիր վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի, Խարբերդի մասնագիտացված մանկատան, «Լուսանշան» ՊՈԱԿ-ի, երիտասարդական թևի ներկայացուցիչներ:

Հայաստանի պետհիմնարկների, ՏԻՄ-երի և հասարակական սպասարկման աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ Ա.Ասատրյանը բարձրաձայնեց, որ այսօր ամբողջ Եվրոպայի արհմիությունները հարկային արդարություն են պահանջում: Արհմիության նախագահը նշեց, որ մեր հանրապետությունում նվազագույն աշխատավարձ ստացողն այսօր տարեկան վճարում է երկու հարյուր հազարից ավել եկամտահարկ, իսկ միջին աշխատավարձ ստացողը տարեկան մեկուկես հազարից ավել դուլար է վճարում: Նման պարտաճանաչությունը ինչու՞ չի տարածվում այն գործարարների վրա, ովքեր ամեն կերպ խուսափում են իրենց հասանելիք հարկային պարտավորություններից:

Մայիսմեկյան միջոցառումն ամփոփվեց «Մոսկվա» կինոթատրոնում՝ ավանդական կինոդիտմամբ:

Շնորհակալ ենք մեր արհմիության անդամներին միասնականության և համախմբվածության համար:

Երթը լուսաբանող լրատվամիջոցների հղումները տեղադրված են Հայաստանի պետհիմնարկների արհմիության ֆեյսբուքյան էջում:

Նշենք նաև, որ Աշխատանքի օրվա առիթով հայտարարություն էր տարածել նաև Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան, որում, ի թիվս աշխատավորության խնդիրների նշվում է, ՀԱՄԿ-ը շարունակում է ՀՀ կառավարությանը հիշեցնել նվազագույն կենսամակարդակի և նվազագույն սպառողական զամբյուղի համատեղելիության անհրաժեշտության մասին:

**ԱՐՀՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԱՌՕՐՅԱ**

➤ Հայաստանի պետհիմնարկների արհմիության ներկայացուցիչները ՀԱՄԿ-ի և մյուս ճյուղայինների հետ ապրիլի 24-ին ծաղիկներ խոնարհեցին Հայոց Ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում՝ հարգելով ցեղասպանության զոհերի հիշատակը:

➤ Պետհիմնարկների արհմիության նախագահ Ա.Ասատրյանն ու գլխավոր հաշվապահ, մարտական ծառայության մեղալակիր Ռ.Օհանջանյանը մայիսյան հաղթանակների օրը հարգանքի տուրք մատուցեցին Հայրենական Մեծ Պատերազմում զոհված հազարավոր հայորդիների կորուստը խորհրդանշող Անհայտ զինվորի հուշահամալիրին:

➤ ՀԱՄԿ-ի ուսումնահետազոտական կենտրոնի կողմից ս.թ. հունիսի 8-9-ը Ծաղկաձորում կազմակերպված սեմինարի մասնակիցները, որոնց թվում էին Հայաստանի պետհիմնարկների արհմիության ներկայացուցիչները, քննարկեցին կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների ապահովվածությունը: Օգտվելով միջազգային գործընկերների և ճյուղային արհմիությունների ներկայացուցիչների հետ հանդիպման հնարավորությունից, ՀԱՄԿ-ի նախագահ Էդուարդ Թումայանը ներկայացրեց վերջին շրջանում կատարած աշխատանքները, ինչպես նաև կարևորեց համագործակցված աշխատանքի անհրաժեշտությունը առաջադրված խնդիրների լուծման հարցում: Համապատասխան ելույթներով ներկայացան նաև Աշխատանքի Միջազգային Կազմակերպության և Համաեվրոպական Տարածաշրջանային Խորհրդի ներկայացուցիչները:

Երկօրյա սեմինարն անցկացվում էր ԱՄԿ-ի և ՀԵՏԽ-ի աջակցությամբ:

## **ՓՆՏՐՈՒՄ ԵՆՔ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՌՈՂՋ ԳՈՐԾՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

Մեր ընթերցողը քաջատեղյակ է, որ Հայաստանում գործում է հանրապետական եռակողմ հանձնաժողով ՀՀ կառավարության, Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի և Հայաստանի գործատուների հանրապետական միության ներկայացուցիչների կազմով, և պարբերաբար ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Ա.Ասատրյանի նախագահությամբ հանձնաժողովում քննարկում են կողմերի առաջարկները հանրապետական կոլեկտիվ պայմանագրով սամանված հարցերի շուրջ:

Օգտվելով հանձնաժողովի հերթական նիստում նախարարի հնչեցրած առաջարկից հանրապետական մակարդակով սոցիալական գործընկերության շրջանակներում արհմիություններին աջակցելու վերաբերյալ՝ հանրապետական եռակողմ հանձնաժողովի անդամ Անահիտ Ասատրյանը գրավոր դիմեց հանձնաժողովի նախագահին՝ ներկայացնելով պետական հատվածում գործատուների կողմից ահմիությունների իրավունքների շարունակական խախտումները՝ միաժամանակ խնդրելով արհմիությունների զարգացման և դրանց աջակցման անհրաժեշտության պարզաբանումներ տալ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարներին:

Արհմիության նախագահի մեկ այլ առաջարկը վերաբերում էր հանրապետական կոլեկտիվ պայմանագրի շրջանակներում նախարարության ենթակայության կառույցներում արհմիությունների կայացմանն աջակցելուն:

Եվ չնայած նրան, որ նախարարն ինքն էր առաջարկել իրազեկման նամակներ ուղղել տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարներին, սակայն, չգիտես ինչ տրամաբանությամբ, պետհիմնարկների հանրապետական արհմիության նախագահ Ա.Ասատրյանի գրավոր առաջարկի պատասխանը ստացվեց նախարարի առաջին տեղակալ Ա.Պետրոսյանից, ով, փաստորեն, չհիմնավորված կերպով մերժեց ճյուղային արհմիության նախագահի՝ արհմիությունների զարգացմանն ու սոցիալական գործընկերության կայացմանը միտված առաջարկները: Ավելին, հանրապետական արհմիության նախագահին ներկայացվեցին մեջբերումներ «Արհեստակցական միությունների մասին» ՀՀ օրենքից, ինչը էթիկայի կանոններից դուրս է: Մի թե Ա.Պետրոսյանը համոզված է, որ, ինչպես նշվում է պատասխան գրության մեջ, աշխատանքի տոնավաճառին մասնակցությամբ և կամ հանրապետական կոլեկտիվ պայմանագրի կիրարկումն ապահովող գործողությունների հաստատված ծրագիրը պետական մարմիններին ուղարկելով այդ մարմինների ղեկավարները ուսանելու են, թե որոնք են արհմիության գործունեության հիմքերը, ինչ պարտավորություններ ունեն իրենք աշխատողների ներկայացուցիչների, կամ թեկուզ աշխատողների առջև և այլն:

Միևնույն ժամանակ, սակայն, Ա.Պետրոսյանը չի թաքցնում, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցրի նախարարությունը ՀՀ աշխատանքային օրենսգիրքը մեկնաբանող լիազոր պետական կառավարման մարմինն է և ըստ անհրաժեշտության, տալիս է արհեստակցական միության գործունեության հետ կապված մասնագիտական պարզաբանումներ և խորհրդատվություն:

Երբ սոցիալական գործընկերության հանրապետական մակարդակում երեք կողմերը գրավոր պայմանավորվածություն են ստանձնել աջակցելու արհմիությունների կայացմանն ու զարգացմանը, երբ օր օրի ավելի տեսանելի են դառնում արհմիության իրավունքների խախտումները, խիստ անհրաժեշտ և հրատապ է արհեստակցական միության գործունեության վերաբերյալ պարզաբանումներ ու խորհրդատվություն տալը:

Հուսանք, որ եռակողմ հանձնաժողովում բարձրացված, արհմիությունների համար կենսական նշանակություն ունեցող խնդիրներին օժանդակելուն անհասկանալի և անընդունելի պատճառով մերժումը կվերանայվի և այսուհետ սոցիալական գործընկերությունը իրապես կծառայի մեր երկիրը կերտող աշխատողի և արհմիության շահերին:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԻՐԵՆՑ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆ ԱՐՏԱՀԱՅՏԵՑԻՆ ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՆԱԽԱՏԵՄՎՈՂ ՄԻ ՇԱՐՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ**

Մայիսի 24-ին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում կայացած հանրապետական եռակողմ հանձնաժողովի հերթական նիստում, մինչ օրակարգին անցնելը, կարևորելով սոցիալական գործընկերության խթանումը, հանձնաժողովի նախագահ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Ա.Ասատրյանը ներկաների ուշադրությունը հրավիրեց Աշխատանքի միջազգային կազմակերպության Աշխատանքի կոնֆերանսին Հայաստանի սոցիալական գործընկերության եռակողմ պատվիրակության՝ ՀՀ կառավարության, Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի և Հայաստանի գործատուների հանրապետական միության ներկայացուցիչների կազմով այս տարի առաջին անգամ մասնակցության փաստին:

Կոնֆերանսում պատվիրակությունը ներկայացնելու էր մեր երկրում աշխատանքի, զբաղվածության, սոցիալական գործընկերության զարգացման ուղղությամբ իրականացված աշխատանքներն ու բարեփոխումները, ինչպես նաև արտահայտելու էր իր դիրքորոշումը, որի մասին հանձնաժողովի անդամները կտեղեկացվեն: Նախագահը կարևորեց միջոցառմանը Հայաստանի ներկայացուցիչների մասնակցությունը՝ նշելով կոնֆերանսին մասնակցող երկրներին աջակցելու ԱՄԿ-ի պատրաստակամությունը:

Օրակարգային հարցերից լայն քննարկման արժանացավ «ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը՝ ներկայացմամբ «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ԾԻԳ-ի տնօրեն Ա.Եղիազարյանի:

Արհմիության ներկայացուցիչները՝ ՀԱՄԿ-ի նախագահի տեղակալ Բ.Խարատյանը, Հայաստանի պետիմնարկների, ՏԻՄ-երի հանրապետական արհմիության նախագահ Ա.Ասատրյանը, թեթև արդյունաբերության, ագրոարդյունաբերության, բանկերի հանրապետական արհմիությունների նախագահները նախագծի դեմ արտահայտվեցին, քանի որ այն աշխատողների աշխատանքային պայմանները վատթարացնող նախագիծ էր:

Հարցերից շատերը, որոնք արդեն իսկ կարգավորված են գործող օրենսգրքով, առաջարկվում էր հանել՝ թողնելով դրանք կողմերի բանակցությունների միջոցով կարգավորվելուն, մասնավորապես՝ նախագծում փոխվում էր արտաժամյա և գիշերային աշխատանք հասկացությունը, հանվում էին արտաժամյա աշխատանքի տևողության սահմանափակումները, հանվում էր արտաժամյա աշխատանքի և գիշերային աշխատանքի դեպքում հավելման չափի նվազագույն սահմանը՝ հավելումների չափի սահմանումը թողնելով կողմերին, հանվում էր ամենամյա երկարացված և ամենամյա լրացուցիչ արձակուրդների սահմանված տևողությունները՝ դրանց սահմանումը ևս թողնելով կողմերին, կողմերի բանակցություններին էր թողնվում առանձին աշխատանքների համար տրամադրվող լրացուցիչ և հատուկ ընդմիջումների քանակը, տևողությունը և հանգստանալու տեղը և այլն: Մինչդեռ մեր երկրում առկա տնտեսական վիճակը թույլ չի տալիս, որ գործատուի ու աշխատողի բանակցության արդյունքը հոգուտ աշխատողի լինի:

Որպես նախագծի ակնկալվող արդյունք նշվում էր աշխատողների ներկայացուցիչների՝ արհմիությունների կայացումը, ինչպես նաև գործատուների փաստաթղթաշրջանառության բեռի թեթևացումը, ինչին ևս առարկեցին արհմիության ներկայացուցիչները:

Հանձնաժողովի կարծիքը կներկայացվի պատկան մարմիններին:

Օրակարգային հարցերի շրջանակում հանձնաժողովի քննարկմանը ներկայացվեց նաև ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի առողջապահական պետական տեսչության կողմից 2015թ. աշխատանքի ոլորտում իրականացված աշխատանքների մասին ամփոփը:

Նախարարն առաջարկեց եռակողմ համաձայնեցված հայեցակարգ մշակել աշխատանքի տեսչության և արհմիությունների կողմից աշխատանքային հարաբերությունների նկատմամբ առավել արդյունավետ վերահսկողություն ապահովելու համար:

Առաջարկվեց նաև երեք կողմերով սոցիալական գործընկերության շրջանակներում տեղեկատվական բնույթի համատարած այցելություններ կազմակերպել:

ՀԳՀՄ նախագահ Գ.Մակարյանի ներկայացմամբ, օրակարգի հարցերի շրջանակում, հանձնաժողովի անդամները տեղեկացվեցին նաև ԱՄԿ-ի հետ համատեղ իրականացված «Նպաստավոր գործարար միջավայր կայուն ձեռնարկությունների համար» վերլուծության արդյունքներին:

Հաշվի առնելով, որ շրջանառվող ՀՀ հարկային նոր օրենսգրքի նախագիծը անմիջականորեն առնչվում է աշխատողներին ու գործատուներին՝ առաջարկություն եղավ արհմիությունների և գործատուների շրջանում ևս քննարկել նոր օրենսգրքի նախագիծը: Հանձնաժողովի նախագահ Ա.Ասատրյանն առաջարկեց ՀՀ հարկային նոր օրենսգրքի նախագծի շուրջ խորհրդարանական լուսններում ներգրավել եռակողմ պատվիրակությանը, որից հետո անհրաժեշտության դեպքում քննարկել:

Հավելենք, որ ավելի ուշ եռակողմ հանձնաժողովի նախագահ Ա.Ասատրյանին գրավոր ներկայացվել է ՀԱՄԿ-ի դիրքորոշումը «ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆԸ՝ ՄԱԿ-Ի ԿԱՆԱՆՑ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԻՍՏՈՒՄ**

***ՄԱԿ-ի կանանց կարգավիճակի կոմիտեն ՄԱԿ-ի հիմնական, կարևորագույն օղակներից է, որտեղ ամեն տարի հավաքվում են ՄԱԿ-ի անդամ երկրների ներկայացուցիչները՝ գնահատելու գենդերային հավասարության ձեռքբերումները, սահմանում գլոբալ ստանդարտներ և կոնկրետ քաղաքականություններ՝ ուղղված գենդերային հավասարությանը և կանանց առաջխաղացմանը***

Ընթացիկ տարվա մարտի 13-19-ը Հայաստանի պետհիմնարկների, ՏԻՄ-երի աշխատողների արհմիության նախագահ Ա.Ասատրյանը հանրային ծառայությունների ոլորտի խոշորագույն արհմիության՝ հանրային ծառայությունների ինտերնացիոնալի (ՀԾԻ) պատվիրակության կազմում Նյու Յորքում՝ ՄԱԿ-ի կենտրոնական կենտրոնակայանում մասնակցել է նշված կոմիտեի 60-րդ նստաշրջանի աշխատանքներին:

Նստաշրջանի ընթացքում տարբեր երկրների արհմիություններ ներկայացնող պատվիրակությունը մասնակցել է մի շարք միջոցառումների՝ կապված աշխատավայրում կանանց բռնություններին, օրգանայգիների միջոցով կանանց առաջխաղացմանը, որակյալ կրթության և հանրային ծառայությունների, արժանապատիվ աշխատանքի և արդար կոլեկտիվ պայմանագրերի հասանելիությանը, արաբ կանանց իրավունքների ու խաղաղության ապահովմանը:

ՃՀՄ նախագահը մասնակցել է նաև ՄԱԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցչության և Հայ օգնության միության (ՀՕՄ) կողմից կազմակերպված «Կանանց դուրսբերումը աղքատությունից գործընկերների միջոցով» միջոցառմանը, որին ներկա էին անդամ պետությունների, ՄԱԿ-ի տարբեր մարմինների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Հանդիպման ընթացքում քննարկվել է կանանց տնտեսական առաջխաղացման, ձեռներեցության և համայնքների կայուն զարգացման խթանմանն ուղղված ծրագրերի, նախագծերի և նախաձեռնությունների լայն շրջանակ: Մասնակիցներն անդրադարձել են կանանց ֆինանսական կայունության, ձեռներեցության և ֆինանսական ներառականության հետ կապված խնդիրներին, մտքեր են փոխանակել կարողությունների ամրապնդման, սոցիալական նորարարությունների և ձեռներեցության խթանմանն ուղղված գործիքների վերաբերյալ: Հարկ է նկատել, որ քննարկումներն անցել են առանց ՀՀ կառավարության ներկայացուցիչների:

Ի նշան միջազգային համերաշխության՝ արհմիությունների ներկայացուցիչները արդարության պահանջի ցույց են կազմակերպել Հոնոլուլուի ներկայացուցչության առջև՝ հոնոլուլուացի քաղաքացիական հայտնի ակտիվիստ Բերտա Կասերեսի սպանության դեմ:

Նշենք, որ կանանց կարգավիճակի կոմիտեի ամենամյա նիստերի սկզբունքային արդյունքները հրապարակվում են «Համաձայնեցված եզրափակիչ դրույթում»՝ Agreed Conclusions: Դրանք ներառում են առաջնահերթ խնդիրների վերլուծություն, ինչպես նաև կոնկրետ ցուցումներ՝ կառավարությունների, միջկառավարական մարմինների, քաղաքացիական հասարակությունների համար, որոնք պետք է ներդրվեն միջազգային, ազգային, տարածքային և տեղական մակարդակներում: Նշված դրույթները հրապարակվել են Հայաստանի պետհիմնարկների արհմիության կայքում:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՔՆՆԱՐԿՎԵԼ ԵՆ ԵՀՄ-Ի ՀԱՆԴՈՒՄԱՆԸ

Աշխարհի խոշորագույն արհմիութենական կառույցի՝ Եվրոպայի հասարակական սպասարկման միավորման հյուսիսարևելյան հատվածի հերթական հանդիպումը կայացավ այս տարվա մարտի 2-ին և 3-ին Բելառուսի մայրաքաղաք Մինսկում, որին մասնակցում էին պետական և հասարակական սպասարկման ոլորտի արհմիությունների ներկայացուցիչներ Հայաստանից, Վրաստանից, Ուկրաինայից, Բելգիայից, Լատվիայից, Լիտվայից, Էստոնիայից:

Հայաստանի արհմիությունները ներկայացնում էին պետական հիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակական սպասարկման աշխատողների, առողջապահության աշխատողների և կոմունալ-բնակարանային տնտեսության ոլորտի հանրապետական արհմիությունների նախագահները, հյուրընկալող երկրի գործատուներ:

Երկօրյա հանդիպման ընթացքում մասնակիցները լսեցին տարբեր երկրներում արհմիությունների իրավունքների, կոլեկտիվ պայմանագրային գործընթացի, ԵՀՄ անդամ կազմակերպությունների կողմից ձեռնարկված արհմիութենական միջոցառումների մասին և այլն: ԵՀՄ գլխավոր քարտուղար Յան Վիլլեմ Գուդրիանը զեկուցեց Կենտրոնական և Արևմտյան Եվրոպայում 2016թ. գործունեության ուղղությունների մասին, ԵՀՄ Եվրոպայի տարածաշրջանի հյուսիսարևմտյան հատվածի քարտուղար Վասիլի Շիլովը ներկայացրեց աշխարհի և տարածաշրջանի առկա սոցիալ-տնտեսական ցուցանիշներ, առկա խնդիրները և այլն:

Հայաստանի ներկայացնող արհմիութենականները բնութագրեցին մեր հանրապետության սոցիալ-տնտեսական իրավիճակը, ներկայացրին վիճակագրական տվյալներ միջին, նվազագույն աշխատավարձերի, սպառողական նվազագույն զամբյուղի, գործազրկության մակարդակի, արհմիության անդամակցության վերաբերյալ և այլն:

Հայաստանի պետհիմնարկների, ՏԲՄ-երի և հասարակական սպասարկման աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ Ա.Ասատրյանը, օգտվելով միջազգային արհմիութենական գործընկերների հետ հանդիպման հնարավորությունից, նախ տեղեկացրեց նախորդ տարում հանրապետությունում կատարված կարևորագույն փոփոխությունները՝ մասնավորապես՝ Հայաստանի Սահմանադրության փոփոխումը, ՀՀ կառավարության, Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի և Հայաստանի գործատուների հանրապետական միության միջև կնքված հանրապետական կոլեկտիվ պայմանագիրը: ՃՀՄ նախագահը նշեց, որ թեև կոլեկտիվ պայմանագրով կողմերը պարտավորություն են ստանձնել աջակցել արհմիությունների զարգացմանը, սակայն իրականում բազմաթիվ են արհմիության իրավունքների խախտումները հատկապես հասարակական սպասարկման ոլորտում: Ա.Ասատրյանը փաստեց, որ հաճախակի են դարձել դեպքերը, երբ գործատուն աշխատողներին ստիպում է արհմիության անդամակցությունից հրաժարվելու դիմումներ գրել, և աշխատողները, ենթարկվելով գործատուի կամայականություններին, հրաժարվում են արհմիության անդամությունից, մանավանդ հանրապետությունում շուրջ 30%-ի աղքատության պարագայում: Որպես ասվածի բնորոշ օրինակ՝ ՃՀՄ նախագահը մեջբերեց ՀՀ ոստիկանության ՊՊԳՎ աշխատողների արհեստակցական կազմակերպությունում առկա իրավիճակը՝ հավելելով, որ երբ նման դեպքերվում մեջբերվում են արհմիությունների իրավունքների վերաբերվող միջազգային կոնվենցիաները, հետևում են այսպիսի պատասխաններ՝ «Մեզ խնդիրներ հարկավոր չեն», «Մարդիկ իրենք են այդպես կամեցել»:

### ՏԱՐՎԱ ԱՍՓՈՓԸ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

2016թ. մարտի 25-ին ՀԱՄԿ-ի նիստերի դահլիճում կայացած Հայաստանի պետհիմնարկների արհմիության խորհրդի հերթական նիստում խորհրդի անդամները լսեցին նախորդ տարում ճյուղային հանրապետական միության նախագահի կատարած աշխատանքը:

Ճյուղային արհմիության նախագահը նկատեց, որ նախորդ տարին ևս դժվարիններից մեկն էր պետական հիմնարկների արհմիության համար՝ ասվածը մասնավորեցնելով ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչությունում ստեղծված իրավիճակով. գործատուի կողմից անօրինական կերպով կասեցվել է արհեստակցական կազմակերպության գործունեությունը, ինչի կապակցությամբ ՃՀՄ նախագահը դիմել է միջազգային գործընկերների աջակցությանը:

Պետհիմնարկների նախորդ արհմիութենական տարին ըստ Ա.Ասատրյանի, ակտիվ էր հատկապես միջազգային համագործակցության առումով: Հայաստանում են անցկացվել պետական հիմնարկների և հասարակական սպասարկման աշխատողների արհմիությունների միջազգային ֆեդերացիայի խորհրդի նիստը, Հանրային ծառայությունների ինտերնացիոնալի տարածաշրջանային հերթական հանդիպումը, մի քանի երկրների պատվիրակություններ են այցելել Հայաստան՝ փորձի փոխանակման և Հայաստանի պատմամշակութային արժեքներին ծանոթանալու նպատակներով, տարբեր երկրներից ստացվել են համագործակցության առաջարկներ:

ՃՀՄ նախագահը հատկանշեց արհմիության համար առանցքային նշանակություն ունեցող հանրապետական կոլեկտիվ պայմանագրի կնքումը, եռակողմ հանձնաժողովի ձևավորումը, որտեղ ինքը ներկայացնելու է պետական հիմնարկների աշխատողների շահերը, ձևավորվել է արհմիության երիտասարդական թևը, որը պլանավորել է առաջիկա երեք տարիների իր գործողությունները:

Օրակարգի հարցերի շրջանակներում խորհրդի անդամները ձևավորեցին հանձնաժողով, որը կիրականացնի Հայաստանի պետհիմնարկների արհմիության 85-ամյակի տոնակատարությունը, լսեցին ՃՀՄ անդամ կազմակերպությունների վիճակագրական և ֆինանսական տվյալների ամփոփ հաղորդումները, ՃՀՄ 2016թ. բյուջեի կատարման մասին հաշվետվությունը, ՄԱԿ-ի կանանց կարգավիճակի հանձնաժողովի մասին և այլն:

### ***Պետհիմնարկների արհմիության դերը զգալի է ՀԱՄԿ-ի անդամ ՃՀՄ-ների շրջանում***

Ս.թ. մարտի 30-ին ՀԱՄԿ-ի նիստերի դահլիճում կայացած Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի խորհրդի հերթական նիստում առանցքայինը ՀԱՄԿ-ի նախագահի հաշվետվությունն էր նախորդ տարվա գործունեության վերաբերյալ: Հայաստանի արհմիությունների ձեռքբերումներից ու բացթողումներից զատ կոնֆեդերացիայի ղեկավարն իր ելույթում անդրադարձել է նաև ՀԱՄԿ-ի անդամ ճյուղային հանրապետական արհմիությունների գործունեությանը և նկատել հատկապես պետական հիմնարկների արհմիության զգալի դերը արհմիութենական զանգվածային միջոցառումներում:

Օրակարգի հարցերի շրջանակում խորհրդի անդամները հավանություն են տվել ՀԱՄԿ-ի բյուջեի կատարման մասին հաշվետվությանը, հաստատել են 2016թ. բյուջեն, ներկայացվել են խորհրդի, ինչպես նաև խորհրդի մշտական գործող հանձնաժողովի կազմում տեղի ունեցած փոփոխությունները և այլն:

Կոնֆեդերացիայի նախագահ Է.Թումասյանի, տեղակալներ Բ.Խարատյանի ու Խ.Առաքելյանի կողմից պարզաբանումներ են հնչեցրել խորհրդի անդամների կողմից բարձրացված հարցադրումներին:

### **ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԵՐԹԱԿԱՆ ՄՐՑԱՇԱՐ ԱՆԴԱՍ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ**

Հայաստանի պետհիմնարկների ճյուղային հանրապետական արհմիության երիտասարդական թևի նախաձեռնությամբ ս.թ. փետրվարի 20-ին «Դինամո» մարզադահլիճում կայացավ թենիսի թիմային առաջնություն արհմիության անդամ կազմակերպությունների միջև:

Մասնակից թիմերն էին ճյուղային արհմիության անդամ կազմակերպություններից 13-ի՝ ՀՀ Էկոնոմիկայի նախարարության, ՀՀ ոստիկանության, ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, ՀՀ զբաղվածության պետական ծառայություն գործակալության, ՀՀ պետական գույքի կառավարման վարչության, Երևանի քաղաքապետարանի, Շենգավիթ, Մալաթիա-Մեբաստիա վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի, Խարբերդի մասնագիտացված մանկատան, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության, Հայաստանի պատմության թանգարանի, ՀՀ բժշկաստցիալական փորձաքննության գործակալության, Աշտարակի տարածքի պետհիմնարկների արհմիությունների թիմերը:

Ճյուղային արհմիության գավաթին արժանացավ ազգային վիճակագրական ծառայության թիմը, երկրորդ տեղն զբաղեցրեց անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի թիմը, երրորդ տեղը՝ Էկոնոմիկայի նախարարության թիմը:

Միջոցառումը նվիրված էր պետհիմնարկների արհմիության 85-րդ տարելիցին: